

4(47)

9(47.925) 252-42



Ա Բ Ա Բ Ս

ԹԻՒ Ա. — ԵՐԶԱԿԱ Ժ.Գ.

1880

ՏՈՒՐԻ Ժ.Բ. — ՅԱԽՆՎ. 31.

ԱՆՑԿԱՑՈՒՄ ՅԱԼԵՐ:

Ամեն բան այնպէս է անց կենում, զնում, ինչպէս որ չխմացանք թէ երբ պատահէց մեղ: Հիւանդութեան մէջ տանջանքով անց կացրած շարաթներն ու ամփաները, մահի, վատանգի երկիւդը, ընտանեկան կեանքի մէջ պատահան ձախորդութեան մասին մեր ունեցած ցաւն ու կոկիծը — ոյս ամեն մեր զիլին եկած բաները ծովին ալիքների նման ուռչում, բարձրանումնեն, գոռում, զոչում անում, երբ որ ժայռի զարկվելով, փշրվումն, ու փշրավաված կրկին յիտ վազում անդուլ ու նդագար վազող, անդարձ զնացող կեանքի հոսանքի մէջ: Ֆամանակով մեր արտասուրը դադարում, ոյն արտասուրը որ երբեմն անմիտիթար կերպով թափումէնք. կամոց կամոց սկսումեն փակվել ու ողջանալ մեր վրբերը, աշխարհիս վերայ մեր սրտի սիրականներին հողը զեելուց յետոյ մի քանի դարուն վերան անց է կենում, տեսնումենք, որ նոցա զերեղմանի վերոյ կանաչ խոտ է զուրս դալիս, ուրիմն մի նոր կեանք երևում, մեր նորոգվելու կեանքին իրբե օրի. նակ: և ուր որ երբեմն յուսահատեցնող ցաւից սիրաներս կորտավումէր, այնաեղ մեղ միիթարութիւն է բերաւմ մի նոր ու նորոգվող կեանք, որ և մեղ յդյու ու սիրտ է տալիս, որ մեր կեանքն ևս պէտք է նորոգվի:

Ամեն բան երազի նման անց է կենում, զնում թէ ուրախութիւնն թէ տիրութիւն. բայց մի լոկ երազ չէր այն, ինչ որ քաշեցինք. շատ անզամ սարսափելի և անուրանալի իրազութիւնն էր, որ պատահէց մեղ: Մի՞թէ այնշափ թեթևամաս պէտք լինէինք, որ մեր զլիին եկած ու անց կացած բանը մեր մորից բոլորովին հանել, կորցնել կամնայինք: Եթէ մոռանալ ևս կարողանայինք, մեր քաշածները մեր միտքը պէտք է ձգէին

1262-54



մեր կորցրած բաղզաւորութեան աննշան մեացորդները, իրբեւ մեր քանդ-  
ված տան փլատակները, այդ անբաղդութեան վերայ մեր ծերանալուն նշանը,  
մեր ճակատին վերայ եղած խորշոմերը, մեր մազերի մէջ ընկած ճերմակը:

Կան շատ մարդիկ, որ իւրեանց համար զուարձութիւն են համարում  
իւրեանց պատահած վտանգները իւրեանց բարեկամներին պատմելը. այս-  
պիսի մարդիկ, սովորաբար պարծանքի համար են պատմելը սիրում, որ  
ցոյց տան թէ ինչե՛ր է իւրեանց զիլովի անց կացել ու զիմացել են, ու-  
րեմն զոցա պատմածները իւրեանց քաշածների խոր տպաւորութիւնն չէ,  
որ իւրեանց սրտի մէջ կայ, ու որ նորոգումէ իւրեանց մոքի մէջ այն նե-  
ղութիւնների պատկերը, որի ներկերը արդէն իւրեանց դժները կէսով չափ  
կորցրել են: Ուրիշները ընդհակառակն աւելի լաւ են համարում չխօսել  
իւրեանց զիլին եկածների վերայ և մինչեւ անգամ հետացնումնեն իւրեանց  
մոքից այնպիսի յիշատակները, որովհետեւ նոցա խայթոցը գեռ ևս բթա-  
ցած չէ, և որքան ևս կամաց կաչին, նորից կարող է վիրաւորել:

Քայց Քրիստոսի աշակերտը իւր անցալի մասին ուրիշ պարտականու-  
թիւններ ունի, քան թէ նորա վերայ կատակով նայելու, կամ ախ քա-  
շելու: Նա մտածումէ, որ մարդիս կեանքի մէջ ինքն իւրեան ոչ մի բան չէ  
լինում, մի ժամանակ իւր քաշածն ևս ի վերուստէն էր, և թէ ինչպէս որ  
սուրբ Գիրքն է, նոյնպէս և մեր կեանքի մէջ մեր փորձած ու մեր զիլին  
եկած բաների զիլքն ևս նորա համար է, որ բան հասկանակ ու սովորենք,  
որ պատժվենք, որ լաւանանք, որ արքար կեանք ունենալու համար խրատ-  
վինք ու կրթվինք, ու մարդս կատարեալ լինի և ամենայն բարի գործի հա-  
մար յաջողակ ու յարմարաւոր: (բ. Տիմոթ. 3: 16, 17):

Մեր կեանքի մէջ փորձած ու մեր զիլին եկած բաների զրբից շառ լաւ  
ենք սովորում ու հասկանում Աստուծու առաջնորդութիւնն ու կառա-  
վարութիւնն ու մենք մեզ լաւ ճանաչում: այդ զիրքը միւնցն ժամանակ  
մի հայելի է մեզ համար, որի մէջ մենք տեսնումենք մեր ապագայն ու հաս-  
կանումներ, թէ մեր վերջը ինչ և ինչպէս պէտք լինի:

Անցած ժամանակի մէջ իմ քաշածներիս վերայ յետ նայելը պէտք է ինձ  
սիրա, ինչը ու հաստատամութիւն տայ ապագայում իմ զիլիս զալու  
բաների մէջ, որ միշտ կարող են ինձ պատահել: Քայց ինչպէս պէտքէ  
անեմ այդ բանը: Մի՞թէ իմ կեանքիս մէջ արդէն քաշածներիս յիշատակը  
իմ սիրաս չպիտի կոտրէ, որ այլ ևս զիմանալ չկարողանամ: Մի՞թէ զեռ  
ևս ցաւը սրտիս մէջ չէ, մի՞թէ զեռ ևս արիւնը չէ վազում քանի քանի  
կէս լաւացած վէրքերիցս: Այս այն օրերը որ ևս քաշեցի, այն օրերի մէջ  
այնպիսի ժամեր կային, որ ես շատ կցանկայի մոքիցս բոլորսին հանել,  
կորցնել: Թէև իմ կեանքիս մէջ շատ կիւրակէներ ևս տեսայ ուրախ ու  
պայծառ, բայց կցանկայի, որ կեանքիս այդ օրերը նորոգվէին որ կրկնն  
անգամ չկորցնեմ ինձ բաւական համարելով: մինչ որ արդէն կորցրել եմ  
կրկնն անգամ չափսոսամ, ինչը չմնամ, ձեռք ծոցս զրած, պատուից ու  
կեանքիցս ընկնեմ, ինչպէս որ պատահել էր ինձ, ու զառն փորձն պապյ:

Մորիները բերեւ անցած օքերը, որն աշխատ է շառ ու շառ բաներ ուղարկելու, այսպես է ասում Աստուծու ձայնը: Ի զուր տեղը միտք չէ բերում այդ ձայնը այն իմ քաշած շատ ու շատ տեսակ սև օրերը, որոնց մէջ գտնված ժամանակս յօսս բոլորովին կտրել կորցրել էի և չկի կարծում որ ինձ ճար ու ճարակ կայ աղատվելու: Եւ յիրափ մի մեծ ու խորհրդաւոր նշանակութիւն ունեցող բան կայ մեր քաշածների մէջ: և ի՞նչ զարմանալի տարրեր զգացմանը ենք ունենում մենք այն ժամանակ, երբ որ միտք ենք անում, մեր զիսին եկածների վերայ, կամ մեր միտքն ենք բերում մեր քաշածները, և երբ որ մոտածումենք, թէ զետեսներ կայ մեր առաջը և ինչեր կարող են մեզ պատահել: Մի մուժ ու անբաղդութիւն գուշակող ամպի նման մեր վերան զալիս է մի պատահմունք, որից չեռանալու այլ ևս ճարը չկայ: Օր ու զիշեր վերան միտք անելով տանջվումենք և մեր սիրտը վախ ձգելով աւելի ևս լատացնումենք մեր զիսին գալու չարիքը: Սովորաբար հազեղէն մարդս աւելի անբաղդ է իւրեան կարծում այն բանի մէջ, որ իւրեան անձանօթ է, ու անյայտ և որ վախենումէ, թէ իւրեան կարող է պատահել, քան թէ այն բանի մէջ, որ իւրեան ծանօթ է, որ փորձեալ է, որ զիսին անց է կացել արդէն: Երբ որ մեզ պատահած վատ բանը արդէն անց է կենում պրծնում, ու մեր սրտի սաստիկ ցաւը մեզմանումէ ու չափաւորվում, դարձեալ խելքներս զլուխներս է զալիս ու կարանումենք մեր քաշածի վերան միտք անել թէ ի՞նչ էր, ի՞նչ չէր, այն ժամանակը մեր զիսին եկած մեծ անբաղդութեան մէջ անդամ մի լաւ, մի օգտակար կողմն ևս տեսնումենք մեզ համար:

Ամեն բանից առաջ քրիստոնէի մոքին այս է զալիս թէ ՚ըլո՞ հէ և Ա. Դ. Պ. Հ. Լ. ՚ըլո՞ ի՞սո՞ ի՞սո՞ ի՞սո՞: Ամենակարողի մի աչքով անելը բաւական էր, որ մեր երկար ժամանակ վերան աշխատութիւն ու քրտինք թափած շինութիւնը յանկարծ փուլ գար: Ինչ որ մենք մեր բոլոր կեանքի մէջն էինք հաւաքել, մի անգամ միայն քամի զարկաւ ու յարդի նման ցիր ու ցան արաւ: Որի վերան որ մենք կկարծէինք թէ մեր երկրաւոր բաղդաւորութիւնն պէտքէ հաստատնք, մի հիւանգութեան կեանքից զրկեց ու գերեզման տարաւ: Վերջապէս ի՞նչ պիտի լինի մեր ամեն կերպով խելք բանացնելն ու արած զգուշութիւնները, երբ որ յափանական Աստուծու խորհրդով ու կարգազով ու կարգազութեան ուրիշ կերպ է վճռված մեզ համար, մեր միտք արածի պէս չպիտի լինի:

Այսու մարդս մի փաքրիկ, մի չնչին արարած է: Դա իւր տկարութիւնն զգումէ ամենից աւելի այն ժամանակ, երբ որ մի փորձութեան ծանը ժամում պէտքէ խսոսովանի, որ ինքն անմեղ չէր իւր զիսին եկած փորձանքի մէջ: Կարելի է, որ սրտով աւելի կազած էր իւր աշխատութեամբ ձեռք բերած հարստութեանն այնպէս, որ մոռացել յաւիտենական Պարզեողին: պէտք էր, որ իւր միտքը զարթնի, պէտք էր, որ Աստուծու կողմից աղջումըն լինի իւրեան, սիրտն ու լեարզը մի լաւ սասանեցնելով: Կարելի է, որ մեզքի չար ճանապարհն էինք զնում, խունկ ծխելով միայն մեր կիրքերին:

միայն վայելութիւններ քաշելու մեր ցանկութեանն, այն ժամանակը ան-  
բաղդութիւնը երկնիքից ցած եկած ու Աստուծու կողմից մեզ խփած կայ-  
ծակի նման մեզ վերայ եկաւ և լսվեցաւ վերեից ձայն, որ ասումէր մեզ  
ևս եմ Տէր, քո Աստուծու ածու: Ի՞նձ միայն պէտքէ ծառայես: Կարելի է, որ  
շատ հպարտանալով մեր ունեցած ոյժին վերայ, մենք կարծումէինք, որ  
մեր ունեցած խելքովն կարող ենք մեր բաղդաւորութեան և յաջողու-  
թեան պատճառն ու տէրը լինել, մեր գործերը կառավարել ու մեր վի-  
ճակը տնօրինել այնպէս, ինչպէս որ մեր սիրտը կամենումէ: այն ժամա-  
նակը յանկարծ մի գերեզման բացվեցաւ մեր առաջին և մեր բոլոր մար-  
մինը դող ընկած, մոքներս բերինք որ մենք մահկանացու Ենք ու յաւի-  
տենական զատաստանի առաջ պէտքէ դուրս գանք: — Ինչ որ լաւ անց  
կացրած կեանքի լիութիւնն ու վայելութիւնը չէր կարող անել, այն  
արաւ մի մեզ զարկող ու գետին փոռող անբաղդութեան հարուած: այդ  
հարութեան մէր ինչու չըստենեն բէրու ու ինչներս մէջ ճանաչենին, Եթէ որ մեր  
քաշաները մեզ համար անսպառզ չմնացին, եթէ որ մեր զլուխը եկած-  
ներիցն այն օգուտը քաշեցինք, որ լաւ հասկացանք, թէ ինչի համար Ենք  
մենք այս աշխարհիս երևու ապրում և թէ որչափ ծավել ենք ու հեռացել  
մեր ճանապարհիցն ու սուրբ նպատակից, ուրեմն և մեր քաշաները մեզ  
համար անբաղդութիւն չեն, այլ գերագոյն և ասուուածային բարելազ-  
դութիւն:

Այս՝ կարող եմ ասել, որ այն ամեն բանը, ինչ որ մեր սաստիկ տըրտ-  
մութեան ժամանակը իրեւ չարիք ու անբաղդութիւն լացացնում էր մեզ  
ու վայ տալ էր տալիս մեր զիւխն, ընզհակառակն մեր վիրկութեան համար  
ուղարկված էր մեր վերայ ի վերուստ: Ես մի սարսափելի հըղեչ տեսայ,  
որ մի զարհուրելի զիշերվան մէջ մարդկային բնակութիւնների ամրող կարգեր մօխիր դարձեց: Ի նչ անմիմարութիւն էր նոյն միջոցին, և երբ  
որ սցդ անցքից յետոյ մի քանի տարիներ վերան անցան, ինչ նոր ծաղ-  
կած, ժողովրդով լցված և ամենենին մոքից անց չկենալու տեղ էր դար-  
ձած այն կրակ ընկած այրված տեղը: Այս տեղի բնակիչները խթան էին  
ստացել, առաջվան իւրեանց թմրութիւնից զարթնել: մի բոլորովին տար-  
բեր աշխոյժ ու զործունեութիւն կտհոնվէր մարդիկների վերայ, մի ազնիւ  
համաձայնութիւն կար ամեն մինի մոքի մէջ հասարակաց օգուտն յառա-  
ջացնելու կողմից: և, այս՝ սակաւ մարդ կպանվէր նոյա մէջ, որ չխսուսո-  
վանին, թէ անբաղդութիւնն իւրեանց աւելի մէծ բարերազդութեանը  
պատճառ գարձաւ: — Ես մի ընտանիք կճանաչէի, որ իւրեանց մշական  
անհամաձայնութեամբ ու հակառակութեամբ մէջները սէր ու միութիւն  
չկար, որովհետեւ ամեն մինը կամենումէր իւր կամեցածը յառաջ տանել,  
միմեանց սիրտը կցաւեցնեն, միմեանց աւելի պակաս կառէին: յանկարծ  
մահի սառն ձեռը նոյա մէջից վեր առաւ իւրեանց ամենին սիրեկան մայրը  
և տեսայ, թէ ինչպէս սորանից յետոյ միմեանց չետ անհաշտ քոյրերը նո-  
րա գերեզմանի վերայ հաշտվեցան, և ինչպէս մի նոր ու ազնիւ կեանք

սկսիցաւ նոցա տանը: — Այսպէս է կառավարում մեղ ամենագետ վերին տեսչութիւնը հազար ու մեկ ուրիշ պատահմունքի մեջ ևս, որ ամենազառն փորձանկներն անդամ, որոնց պատահումնք մեր երկրաւոր կեանքի մեջ, մեղ համար խաղաղութիւն ու օրհնութիւն են յառաջ բերում: Ճանաչեցէք որ Աստուած է առաջնորդողն մեղ ու կառավարողը, և թէ Աստուածու արածը արգարութիւն է, ողօրմանթիւն և շնորհ միոյն:

Այսպէս անցած օրերի քաշածներից հասկանումեմ, որ անձն գոյաց չի բարերար նիւան առողջութիւն առջի համար մի գոյաց, որ գոյաց բարերար նիւան են, որ այդ ձախորդութիւններով ամենից աւելի մեր սիրուն ու մեր հոգին աղնուանումէ: Կարիքը նեղութիւնը մաշկանացու մարդի ամենալաւ ուսուցիչն է եղել միշտ: առանց կարիքի, առանց նեղութիւն քաշելու ոչ մի արհեստ, ոչ մի զիտութիւն գտնված ու յառաջացած չէր լինի: Կարիքն ու նեղութիւնը հաւատի ամենափրկարար քարոզիչն ես է: Ըշխարհիս ամեն բանի կարճատե և ասկականացու լինելը նորա շացնող ու զրաւիչ հրապորների ցյժը մեր աչքի առաջին շատ պակասեցնուումէ և մարդիս հոգին աւելի աշխատումէ ու փոփոքում աւելի վսեմ: աւելի մնացական բան պտուել գտնել: — այսինքն է իւր խելական կոչմանն հասնել:

Որքան շատ մարդիկ կան աշխարհիս երեսին, որ կարծեա աշխարհ են ծընվել ու ապրումեն նորա համար միայն որ իւրեանց երեսի քրտինքով իւրեանց ամենօրեայ սպրուսար ձեռք բերեն, տուաւոտից մինչեւ երեկոյ աշխատեն, քննեն ու մեռնեն: Ենչ շնչին նպատակ ունի այդ տեսակ մարդիկների կեանքը: Քայց սցրպիսիները մի աւելի բարձր բանի վերայ չեն մուածի ու մաքով չեն բարձրանայ, եմէ որ իւրեանց միատեսակ կեանքն ու զործունեւթիւնը արիւնով ու կրակով չվրդովվէր ու չընդհատվէր: Այդպիսի պատահար որ լինումէ, խելոյն գարձեալ ազօնք են անում — այն ժամանակ սկսումեն գարձեալ հարցնել, որ բարիքն է, որ ոչ մի զարհուրիկ պատահմունք չէ կարող ոչնչացնել, կեանքի որ բազգաւորութիւնն է, որ ոչ մի պատերազմ չէ կարող խանգարել: ո՞ւմ համար ենք աշխատում, հաւարում, երբ որ զաւակները մեղանից առաջ են հոգը մնանում: Կրօնը, որ մինչեւ ցայժմ՝ նոցա համար մի երկրորդական բան էր, մէջ նշանակութիւն է ունենում: Նոցա կոտրած սիրուն անհանդիստ միտքն ու վարդոված հոգին ջերմեսանդ աղօթքի թեւերի վերայ, հող ու մոխիր զառնաւը: ամենօրեայ սովորական միակերպ աշխարհային կեանքից վերանումէ զեզի աստուածայինը: Մինչեւ ցայժմ՝ նոքա բեանտիր անասուններ էն, որ աշխատութիւնից զեզի տիսուն ու մնուրը էն զարձեալ յետ զուում: ախոսից ու մնուրից զեզի աշխատելու տեհը, այժմ նոքա մարդիկ են, որովհետեւ երկրաւոր կեանքը նոցա բաւականութիւն չէ տալիս, և նոքա մի ուրիշ հայրենիք: մի ուրիշ, աւելի վսեմ նպատակ են իւրեանց մարդից, անց կացնում և նոցա սրտում եղած անմահ բանը իւր իորցըած իրաւունքը յետ է պահանջում:

Յաւեր քաշելը մի բարիք, մի բարերարութիւն է: Մեր քաշած ցաւերը

յայտնումեն մեղ մեր ստեղծող ու մեղ կառավարող Աստուծուն և դէպի նորան են մեղ տանում։ Առողջ մարդը իւրեան անմահ կկարծէր, եթէ հիւանդութիւն չտեսնէր, բազգաւոր մարդը, եթէ անբաղդութիւն չտեսնէր, իւրեան ամենակարող կկարծէր, իւր միաբն ամենելին գեղի լաւը չէր փոխի, եթէ որ նորա քաղցր ու ախորժ կեանքի երազը զարհութանկօրի չվերջանար։ Քայց երբ որ հիւանդութեան մէջ քաշած ցաւերից զիշերը դոզումն, երբ որ իւր մահիճից, որի մէջ հալլում ու մաշվում, տեսնումէ գերեզմաններ, որի մինն ևս իւրեան է սպասում, երբ որ իւրեան անհաւատարիմ բազգաւորութեանն չետ կեղծաւորներն ու երեսանց բարեկամներն ևս իւրեանից չեւանումն ու փախում, այն ժամանակ հասկանումէ նա, որ մարդ մի տկար արարած է, և թէ որշափ ևս մահկանացու մարդ ոյժ և իշխանութիւն ունենայ ոչ մի բան իւր ձեռին չէ։ Մի միայն Աստուած է իշխողը, նորա ձեռին է ամենայն իշխանութիւն ու զօրութիւն, որովհետեւ ամենակարող է. իսկ ամենայն արարած, նորա չետ համեմատելով, անզօր մի բան է։ Երբ որ իւր ամենայն ուրախութիւնները ոչնչանումն մի ալէկոնդած նաւի նման, որ կոտրիվելու ծովի տակ գնալու ու կորչելու վերայ է, այն ժամանակ սովորումէ աղօմք անել այն մարդն ևս, որ իւր կեանքում գեռ ևս ոչ մի ժամանակ աղօմք արած չէ, և իւր կեանքի մըրքիկ մէջ նզովումէ ամբարտաւան մարդը իւր անմտութիւնը և խոնարհումէ վերին իշխանութեան առաջին։

Ուրախութեամբ միաբս եմ բերում իմ շատ տիսուր օրերս — այն օրերէ Ֆջ յայտնէցաւ ին Աստուածած իմ բորին իսկացող նույնականութեան ամենապահանջանքաւ իւրագլ. ուրեմն իմ տրամութիւններս ին դժուկ Աստուած Պարան։ Այն օրերը նեղութիւնն շատ ու շատ անգամ այն աստիճան մեծ էր լինում, որ ես կարծումէի, որ այսուհետեւ ինձ այս աշխարհումն այլ ևս երբէք լաւ լինելու չէ. բայց Աստուծու օգնութիւնն ինձանից այլ ևս շատ հեռու չեր։ Նա աչքով արաւ, ու միրիկի սկ սկ ամպերն ցրվեցան և ամեն բան փոխվեցաւ։ Լաւ է, որ ես յետ եմ նայում իմ անց կացրած տարարազդութիւնների վերայ, որովհետեւ նոքա իմ սիրոս պնդացնումն իմ ապագային համար։ Իմ տարարազդութիւններիցս սովորումէ հաստատ յոյս ունենալ ինձ փրկող երկնաւոր Հօրս վերայ, որ ինձ ապագային ևս մօտիկ կլինի, և այն ժամանակ ինձ կօգնէ, երբ որ իսկ ժամանակն է իմ բարուս համար։ Իմ անց կացրած ժամանակիս հոսանքից վեր եմ առնում զնվացնող բալասան իմ այսօրվան վերքիս համար և միանդամայն ոյժ եմ ստանում հանգիպելու ամեն մի չարկին։

Քաշած ցաւերիս վարժատանը այն մեծ նշանակութիւն ունեցող Ճշմարտութիւնն ևս սովորեցի, որ մարդիս այնուան թէ շորէի իպատահէ, որշակ որ ոյժ ունի առանելու։ Աստուած, որ տնօրինումէ մարդիկների կեանքի վիճակն ու նոցա զիսին գալու բաները, որ տալիս է մարդիկներին այլևայլ չափով ոյժ ու կարողութիւն, իւր անքննելի իմաստութեամբ կշուկ է թէ մարդիս զիսին գալու բանը և թէ նորա ոյժը։ Ով որ միայն իւր հաւատը պինդ

կազմէն ով որ միայն փաքրութեամբ ինքն իւրեանից յոյսը չի կարի, ով որ իւր յոյսը չի կարի Աստուծուց, որ մեր կեանքի տերն է, նա չի կորչի: Այն մարդը ամենածանր բանն ևս կարող է տանել, որչափ մեծ է ցաւը այնշափ ևս շուտ է անց կենում: միայն տանելի ցաւերը աւելի երկար են քաշում:

Լուս ու ծանր կերպով ձգումեմ աչքս այն քաշածներիս վերայ, որ անց կացած օրերումն քաշեցի: միտք եմ անում թէ այն ի՞նչ պատերազմներ եր, որ ես պատերազմեցի: ինչե՛ր եկան գլխիս: Ամեն ժամանակ այնպէս վուեմ կերպով մտածած չէի: որ նոցանից ինձ համար օգտակար խրառներ ստանամ ու բան սովորեմ: Աթէ որ արդէն շատ անդամ շատ բան կորցրած էի: ի՞նչի ապա կեանքի անցաւոր բարիքը այնպիսի անշափ արժեք ու նշանակութիւն զարձեալ ունէին ինձ համար: Ի՞նչի ուրեմն այնպէս սրտով կապած էի նոցա: որ իրը թէ ոչ մի ժամանակ ձեռիցս գնալու չէին: Ի՞նչի ուրեմն զարձեալ միշտ տաք սրտով, ամենայն ցանկութեամբ պատուի: Հարստութեան: քաղաքական կեանքի մէջ ուրիշներից աւելի զերազանց լինելու ետելից էի ընկնում, երբ որ զիտեմ: թէ որչափ քիչ բան ուկտը է: որ ամենից ևս զրկվիմ: ամեն բանն ևս կորցնեմ: Ի՞նչի է դեռ ևս սիրտս կոտրվում: երբ որ նեղութեան ու կարիքի հոգսերը ինձ պաշարումն: երբ որ զիտեմ: որ Աստուած, իմ Երկնաւոր Հայրս, ամեն անգամ ինձ օգնել է: և այսուհետեւ ևս իւր օգնութիւնը ինձանից անսպակաս պէտքէ անէ: Ի՞նչի եմ ուրեմն այսպէս շուտ շուտ զարձեալ իմ առաջ արած սիալներիս մէջ ընկնում: երբ որ զիտեմ: թէ որքան շատ քաշելու բաներ ունիմ իրբե պատիժ այդպիսի սիալներիս պատճառով:

Ուրեմն իմ քաշածներս, որ ինձ համար մի վարժատուն էին, ուր որ ես ուսումն առայ բոլորովին ոչի՞նչ էին. ուրեմն զուր ինձ տարար Դու, ով բարի նախախնամութիւնն: այդ դպրոցը, որ բան սովորեմ ու գուրս զամ Քո զատիքարակութեամբ: Ա՞յլ է ուրեմն քրիստոնէի համրերութիւնն ու Երկայնմտութիւնը: որ պէտքէ ունենայ մարդս աշխարհիս ու բաղդի փոխիսութեան ժամանակ: Եւ ի՞նչպիսի ապգու խրառներ ընդունեցի քեզանից: այ փորձանք: — Մէկ կողմ քաշվիմ: անց կացած օրերիս վերայ միտք անեմ ու միտք բերեմ: Անց կացրած օրերիս նեղութիւններն ու տրտմութիւնները ովկ Երկնաւոր Հայր, թող զուր տեղը ինձ ձայն չտան: այլ բան հասկացնեն իւրեանց ձայն տալով, որովհետեւ այն օրերը Դու ինձ տուիր ոչ թէ ինձ կորցնելու համար, այլ այնպիսի մի բարերարութիւն ինձ անելու համար, որ ինձ օրչնութիւն բերէ: Ամեն մի անբազգութիւն, որ ինձ պատահած է, ինձ համար ազդեցութիւն ունեցող մի պատգամաւոր լինի զէօլ ի Քեզ դառնալ ու զիմել խրառող. Երկրաւոր բանի ամեն մի կորուստ Քո Երկնաւոր արքայութեանդ արժանանալու մի նշմարանքը լինի: ամեն մի մայիսի զիպուած նշան յաւիտենական կեանքի, ուր որ և իմ տեղս պիտի լինի Քո ողորմութեամբդ:

Ովկ Երկնաւոր Հայր, Քո հզօր ձեռովդ և բարձր բազուկովդ օգնի՛ր ինձ,

երբ որ իմ ծունկերս կղազզողան, և երբ որ իմ ոյժս քո իմ վերայ զրած բնի տակ պիտի կարվի:

(Յաւլէ)

Դ. Ե. Ա.

ՈՐԴԱՆԿԱՐՄԻՐ.

Նախ պէտքէ ասել, որ որդանկարմիր ամենահին ժամանակներում, մինչ անգամ նոյի առաջին սերունդների ժամանակ, դարձել էր իւր վերայ մարդիկների ու շքը, պատճառ հին կտակարանում զրած Մովսէս մարգարէի ձեռնվզ, որինակ Ելից, Անտացւոց և Թուոց գրքերում կարմիր ներկ արտայայտելու համար պատահումէ Տօօլատ բառը, այս բառի արմատը տօօլա է և նշանակումէ միջատ, ճճի, որդն:

Բացի զրանից մեր Աստուածաշնչում փոխանակ տօօլատ բառի ամենաեղ և միշտ գործ է ածված որդան կարմիր: Որդանկարմիր առաջին գործածութիւնը՝ նիւթեղէններ ներկելու համար պէտքէ համարել 270 տարի Քրիստոսի ծննդից առաջ: Այն միջոցին, ինչպէս յայտնի է պատմութիւնից, Հռովմայեցիների թագաւոր Ավրելիանոսը ստացաւ ընծայ Պարսիկների թագաւորից բրդէ հիւսուածք պատմութանացու, որ ամենապարզ և մաքուր կարմիր գոյն ուներ: Այս բանը երկար ժամանակ դարձել էր արժանայիշատակութեան առարկայ Ապիտօփիում և Հռովմայեցիների ընդհանուր զարմացման առարկայ, և ոչ թէ միայն Ավրելիանոսը, այլև նորայաջորդ Պրօրը, իսկ յետոյ և Քիովլիտիանոսը անպատճառ ցանկանում էին ունենալ այսպիսի ներկ, որ հանգամանքների ստորագրված չլիներ: Նոյն այս նպատակով կատարվեցաւ ճանապարհորդութիւն Հնդկաստան, բայց նոցա բոլոր որոնմունքը զուր անցան: Հինգերորդ զարում, երբ քրիստոնէական հաւատը ծաւալվեցաւ Հոյաստանում, նորա չետ և լուսաւորութիւնը, որ յայտնի է «Առկի դար Հոյաստան աշխարհ» անոնով, այն ժամանակի շատ մատենադիրներ և պատմաբաններ յիշումն իւրեանց զրուածներում որդան կարմիր մասին, օրինակ Վաղար Փարագեցին իւր պատմութեան էջերում, որը բովանդակումէ Երարատի նկարագրութիւնը, համեմատելով նորան իւր պատարերութեան, հանքերի, բուսական և կենդանական բերքերի հարստութեան կողմից Եզիդակոսի և երկրային զրախոտի չետ ի միջի այլոց ասումէ, «որ մի քանի բոյսերի արմատնը ին կից, որոնք առհասարակ բուսնումն եղեղնեայ Ճաշիճների մօտ, զայանումն որդեր, որոնք տալիս են ամենազնիւ կարմիր ներկ»:

Բացի զրանից մեր պատմութեան հայր Մովսէս Խորենացին մէծ Հոյաստանը նկարագրելիս որ բաղիանումէր այն ժամանակ 15 նահանգներից, որոնցից միջնն ասվումէր Երարատեան, նորա ինն նահանգները նկարագրելոց յետոյ, յարակցումէր Երարատեան նահանգը բովանդակումէ իւր մէջ լեաներ, զաշտեր և արտազրումէ առատութեամբ ամեն տեսակ բերք,